ՀՈԴՎԱԾՆԵՐ — СТАТЬИ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊՐՈԳՐԵՍԻ ՊՐՈԲԼԵՄԸ ԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Գ. ԱՍԼԱՆՅԱՆ

Մարդկության առաջ շարունակ ծառացել է այն հարցը, թե ինչպես է ընթանում մարդկային հասարակության պատմությունն ընդհանրապես՝ առաջընթաց, ետընթաց, թե շրջապտույտի ձևով, կա արդյոք պրոցեսի որևէ օրենք և ընդհանրապես պատմության օրինաչափություն, որոնք են հասարակական կյանքի շարժիչ ուժերը։ Այս և նման պատմափիլիսոփայական հարցերը շարունակ զբաղեցրել են ոչ միայն պատմաբաններին, սոցիոլոգներին, փիլիսոփաներին, տնտեսագետներին, քաղաքագետներին, այլև բարոյագետներին, բանաստեղծներին ու գրողներին։ Ոչ մի նշանավոր գործիչ կամ մտածող անտարբեր չի անցել պրոգրեսի գաղափարի կողքով. լեռ գրականություն է գրված և շարունակվում է գրվել այդ հարցի շուրջը։

Այդ գրականությունից երևում է, որ պատմության խորդուբորդերի միջով պարզորոշ անցում է տարբեր հոսանքների կրքոտ պայքարը հանուն պրոգրեսի կամ դրա դեմ։

Հասարակության առաջավոր ուժերը պաշտպանել են պատմության պրոգրեսիվ զարգացման գաղափարը, երազել են բնությանը տիրապետելու մասին, այդ գաղափարի օգնությամբ հիմնավորել են արդարացի սոցիալական կարգեր ստեղծելու իրենց պահանջները, մարդկության երջանկության համար պայքարելու ծրագրերը։ Հետադեմ ուժերն, ընդհակառակը, ժխտել են պրոգրեսի օրինաչափությունը, դիմադրել են նոր, առաջավոր կարգերի հաստատմանը։ Ինքնուրույն բանվորական շարժման և մարքսիստական իդեոլոգիայի ծագումով (XIX դ.) պրոգրեսի շուրջ մղվող պայքարը ընդունեց խորը, համատարած, բազմակողմանի բնույթ. ռևոլյուցիոն պրոլետարիատը հանդես եկավ որպես սոցիալական պրոգրեսի հզոր կրող, իսկ մարքսիզմը տվեց այդ գաղափարի ստույգ գիտական բացատրությունը, հիմնավորեց կոմունիզմի՝ որպես հասարակության բարձրագույն պրոգրեսի օբյեկտիվ օրինաչափությունն ու անհրաժեշտությունը։ Ընդ որում, մարքսիզմն այդ մեծագույն իդեալի իրագործումը կապեց բանվոր դասակարգի ազատագրական շարժման, նրա ռևոլյուցիոն ստեղծագործության հետ. մարքսիզմը մշակեց կոմունիզմի տեսությունը, ծրագիրը և պայքարի եղանակները։

Առանձնապես սուր բնույթ է ընդունել այդ պայքարը ներկայումս, մեր դարաշրջանում, երբ իր դարն ապրած կապիտալիստական շահագործական ֆորմացիան փլչում է, իսկ նրա փոխարեն հաղթական արշավով հանդես է գալիս կոմունիզմը։

Պրոգրեսի և ընդհանրապես փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմաբանության, քաղաքատնտեսության հիմնական հարցերի շուրջը երկու սիստեմների միջև մղվող գաղափարական պայքարում վառ կերպով դրսևորվում է կոմունիզմի և կապիտալիզմի գաղափարների արմատական հակադրությունը։ Առաջինը գիտական, մատերիալիստական ուսմունք է, ամեն մի ռեակցիայի, ստրկության, գաղութարարության անհաշտ թշնամի. այն արտահայտում է բանվոր դասակարգի, ամբողջ աշխատավոր ժողովրդի արմատական շահերը, նրանց ցույց է տալիս աշխարհը արդարացի հիմունքներով վերակառուցելու ուղին։ Այդ աշխարհայեցողությունը իր էությամբ ազատագրական է, ռևոլյուցիոն, լավատեսական, մարդասիրական։ Երկրորդը իդեալիստական է, այն արդարացնում է շահագործումը, գաղութարարությունը, գունազարդում է կապիտալիստական կարգերը, անխուսափելի է համարում պատերազմները, դրանք վերագրելով մարդու իբր թե ապրեսիվ բնազդին։ Միայն մարքսիզմ-լենինիզմն է խորապես բացատրում պատմության ընթացքը և հիմնավորում անվերջ առաջադիմության գաղափարը։ Մեկ միլիարդից ավելի մարդ սոցիալիզմի աշխարհում այդ իդեոլոգիայի լույսի տակ կառուցում է սոցիալիզմ-կոմունիզմ։ «Սովետական ժողովրդի համար,— ասում է Ն. Ս. Խրուշչովը,— չկան ավելի վեհ իդեալներ, քան մարքսիզմ-լենինիզմի իդեալները։ Նրանք բարձրացնում են մարդուն, նրան դարձնում են բնության իսկական արքան, հաստատում են կոմունիստական բարոյականությունը, որպեսզի մարդը մարդու համար լինի բարեկամ և եղբայր»։ Միայն մարքսիզմ-լենինիզմն է մարդկությանը հաստատ հավատ ներշնչում երջանիկ ապագայի նկատմամբ և ոչ միայն ներշնչում է, այլև մոբիլիզացնում, կազմակերպում է հարյուրավոր միլիոն մարդկանց, նրանց բարձրացնում է ինքնուրույն քաղաքական ստեղծագործության, տանում պատմության մեծ պրոգրեսի ճանապարհով։ Մարքսիզմ-լենինիզմի վսեմ իդեալները մարմնացած են սոցիալիզմի համաշխարհային սիստեմում, միջազգային կոմունիստական շարժման մեջ։ Ղեկավարվելով մարքս-լենինյան ուսմունքով, Սովետական Միության Կոմունիստական պարտիան մեծ Լենինի գլխավորությամբ Ռուսաստանի ժողովուրդներին պայքարի հանեց, հասցրեց սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակին, որով նոր դարագլուխ բացվեց համաշխարհային պատմության մեջ։ ՍՄԿՊ XX և XXI համագումարները, Կենտկոմի պլենումները մարքս-լենինյան տեսության ստեղծագործական զարգացման փայլուն օրինակներ են։ XXI համագումարի պատմական որոշումներում, նրա ընդունած յոթնամյա պլանում գիտականորեն մշակված է մեր երկրում կոմունիզմի ծավալուն շինարարության հոյակապ ծրագիրը, գծագրված են կոմունիստական քաղաքակրթության հաղթանակի ռեալ հեռանկարները։

* * *

Բուրժուական պատմափիլիսոփայության մեջ պրոգրեսի գաղափարը որոշակի էվոլյուցիա է ապրել, համարյա հայելու պարզությամբ արտացոլելով այդ դասակարգի տնտեսական, սոցիալական ու քաղաքական էվոլյուցիայի պատկերը։ Մինչև XIX դարը առաջավոր գործիչներն ու մտածողները պայքարում էին ֆեոդալիզմի, նրա իդեոլոգիայի, միջնադարյան հիմնարկների դեմ, ջերմ կերպով պաշտպանում էին պրոգրեսի գաղափարը, քննադատում էին

հասարակության հետադարձ շարժման վերաբերյալ կոնցեպցիաները։ Այդպիսի առաջավոր մտածողներ էին XVII—XVIII դարերի լուսավորիչներն ու մատերիալիստները Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլ երկրներում։ Ժան-Ժակ Ռուսոն, օրինակ, հավատում էր մարդու առաջադիմության անվերջ հնարավորություններին, Մոնտեսքիեն, Տյուրգոն, Կոնդորսեն. Հոլբախն ու Դիդրոն պրոգրեսի գովերգուներ էին։

Պրոգրեսի շատ ավելի համարձակ ու հետևողական մարտիկներ էին XIX դ. ռուս ռևոլյուցիոն դեմոկրատիայի իդեոլոգներ ու գործիչներ Բելինսկին, Գերոենը, Չերնիշևսկին և նրանց հետևողներ ու գինակիցներ Մ. Նալբանդյանը, Ախունդովը, Ճավճավաձեն և ուրիշներ։

Այն ժամանակ, երբ վերոհիշյալ գործիչների ու մտածողների հայացքն ուղղված էր դեպի ապագան, հաղթանակած կապիտալիզմի գաղափարախոսները XIX դարում՝ գռեհիկ տնտեսագետները, պոզիտիվիստները, ռեակցիոն պատմաբանները ամեն կերպ փորձում են պաշտպանել ու իդեալականացնել կապիտալիզմը։ Պրոգրեսի գաղափարը բացահայտորեն դուրս չի նետվում, ընդհակառակը, այն ամեն կերպ գովերգվում է վեպերում, պոեզիայում, փիլիսոփայական ու հրապարակախոսական գրականության մեջ։ Հիմնական միտքն այն էր, որ պրոգրեսը կարող է իրագործվել և բարիքներ բերել միայն կապիտալիզմի հիման վրա, իսկ կապիտալիզմն իր հերթին ընդունակ է ապրելու այդպիսի պրոգրես։ Այդ տեսակետից պրոգրեսը նշանակում էր, որ կապիտալիզմը պետք է տարածվի բոլոր երկրներում, կյանքի բոլոր ոլորտներում և լայնությամբ, և՛ խորությամբ։ Դա իրոք կապիտալիստական պրոգրեսի մեղրամիսն էր։

Բուռն վերելք էր ապրում կապիտալիստական էկոնոմիկան, տեխնիկան, կուլտուրան և արվեստը. մեծ հայտնագործություններ էին տեղի ունենում գիտության մեջ։ Մարքսն ու Էնգելսը «Կոմունիստական պարտիայի մանիֆեստում» փայլուն կերպով բնութագրել են կապիտալիզմի այդ պատմական դերը համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում. «Բուրժուազիան,— ասված է այնտեղ,— իր դասակարգային տիրապետության ավելի պակաս, քան 100 տարվա ընթացքում ստեղծել է ավելի բազմաքանակ և ավելի գրանդիոզ արտադրողական ուժեր, քան բոլոր նախորդ սերունդները միասին վերցրած։ Բնության ուժերի սանձահարումը, մեքենայական արտադրությունը, քիմիայի կիրառումը արդյունաբերության և հողագործության մեջ, շոգեքնացությունը, երկաթուղիները, էլեկտրական հեռագիրը, հողագործության համար ամբողջ աշխարհամասերի յուրացումը, գետերի նավարկելիացումը, կարծես թե երկրի ընդերքից դուրս կոչված բնակչության ամբողջ զանգվածներ—նախորդ հարյուրամյակներից ո՞ր մեկը կարող էր ենթադրել, որ այդպիսի արտադրողական ուժեր են նիրհում հասարակական աշխատանքի ընդերքում»։

Բուրժուազիայի իդեոլոգիան այդ ժամանակ տոգորված էր լավատեսությամբ, նա ապավինում էր պրոգրեսի գաղափարին, որպեսզի այն հարմարեցնի կապիտալիզմի շահերին։ Պոզիտիվիստական սոցիոլոգիայի հիմնադիր Օ. Կոնտի կարծիքով պրոգրեսն ու կապիտալիստական հասարակարգը անխզելիորեն կապված են միմյանց հետ. միայն կապիտալիստական կարգերը կարող են ապահովել պրոգրեսը, իսկ վերջինս իր հերթին պետք է ամրապնդի այդ հասարակարգը։ Անգլիական սոցիոլոգ պոզիտիվիստ-էվոլյուցիո-

նիստ Հերբերտ Սպենսերը ընդգծում էր պրոգրեսի խիստ աստիճանական, դանդաղ էվոլյուցիոնիստական բնույթը։ Այդ հայացքները հետագայում հանդիսացան ռեֆորմիզմի ու ռևիզիոնիզմի գաղափարական ակունքներից մեկը։

Լոնդոնի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Մ. Ջինսբերգը այսպես է բնութագրում պրոգրեսի գաղափարի տարածումը XIX դարում. «Պրոգրեսի նկատմամբ եղած հավատի պատմության գագաթնակետը XIX դարի վերջն էր։ Նրա բարձրաստիճան քուրմերը և երկրպագուները—ինչպես ասում է Բերին—բոլորը ռացիոնալիստներ էին, այդ հավատն իր տարածումով պարտական է կիրառական գիտության հաղթարշավի առաջացրած ոգեշնչմանը, հաղթարշավ, որը դրսևորվեց տեխնիկայի շլացուցիչ նվաճումների մեջ, իսկ տեսական առումով պարտական է մտքի ու հետազոտությունների բոլոր բնագավառների զարգացման ու էվոլյուցիայի իդեաների ճյուղավորված ազդեցության առաջացրած ոգեշնչմանը»[1]։

Պրոգրեսի գաղափարի պատմաբանները (Մ. Ջինսբերգ, Ջ. Բերի, Բրրդ և ուրիշներ) այդ գաղափարի զարգացման մեջ մինչև XIX դարի վերջը երեք ժամանակաշրջան են նշում. «Առաջին ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև ֆրանսիական ռևոլյուցիան, դրանով զբաղվում էին միայն դեպքից-դեպք. փիլիսոփաներն ու պատմաբանները հավատում էին դրան առանց հետազոտության։ Երկրորդ ժամանակաշրջանում ըմբռնվեց դրա հսկայական նշանակությունը, ձևակերպվեցին պրոգրեսի իդեան բնորոշող և ապացուցող ընդհանուր օրենքի որոնումները։ XIX դարի 60-ական թվականներին պրոգրեսի իդեան թևակոխեց իր պատմության երրորդ շրջանը»[2]։ Այս պարբերացման հետ հիմնականում համընկնում է նաև Ջինսբերգի և մյուսների պարբերացումը։

Այս սխեման ճշմարտությունից այնքան էլ հեռու չէ, բայց էականն այդ չէ. շատ ավելի կարևոր է բուրժուական պատմաբանների այն խոստովանությունը, թե ինչ ռեակցիա է կատարվում բուրժուական գաղափարախոսության մեջ պրոգրեսի նկատմամբ հետագայում։ Այդ նույն պատմաբանների վկայությամբ XIX դարում պրոգրեսի օրենքի որոնումները հաջողությամբ չպսակվեցին. մտածողներին չվիճակվեց հայտնաբերել կամ հաստատել պրոգրեսի որևէ օրենք։ Ուստի և պոզիտիվիստների ու էվոլյուցիոնիստների համակնությունն այն մասին, թե իբրև գտել են պրոգրեսի օրենքը և գիտական բնույթ տվել դրան, հայտարարվում է դոգմա (Բրրդ). անցյալի ոչ մի հեղինակի չի հաջողվել ձևակերպել պրոգրեսի օրենքը կամ սկզբունքը (Ջինսբերգ)։ Ավելին. բուրժուական սոցիոլոգիան ու պատմափիլիսոփայությունը ոչ միայն անզոր դտնվեցին հայտնաբերելու հասարակության զարգացման, ուրեմն և պրոգրեսի օրենքը, այլև շուտով նահանջեցին այդ գաղափարից, վախենալով սոցիալական հետագա պրոգրեսից։

Սակայն բուրժուական իդեոլոգիայով չի սպառվում XIX դարի իդեոլոգիայի պատմությունը։ Նույն դարում տիրող դասակարգի իդեոլոգիային հակառակ, նրա դեմ մարտնչելով, երևան է գալիս ռևոլյուցիոն պրոլետարիատի իդեոլոգիան՝ մարքսիզմը։ Պրոլետարիատի մեծ ուսուցիչներ Մարքսն ու Էնգելսը իսկական հեղաշրջում կատարեցին ամբողջ հասարակական մտքի պատմության մեջ, բացահայտեցին հասարակության զարգացման խորագույն

[1] M. Ginsberg, The Idea of Progress, London, 1953, էջ 11։
[2] Bury J., The Idea of Progress, N. Y., 1955, էջ 334։

սրենքները՝ հասարակական-տնտեսական ֆորմացիաների զարգացման բնապատմական պրոցեսը և այդ հիման վրա գիտականորեն հիմնավորեցին այն դրույթը, որ պրոգրեսը պատահական երևույթ չէ, այլ զարգացման օրենք։ Մարքսիզմը բուն կապիտալիստական հասարակության մեջ գտավ այն ուժը, որը կարող է և պետք է իրագործի պատմական մեծ պրոգրեսը՝ հասարակության կոմունիստական վերափոխումը։ Մարքսիզմի հակառակորդները՝ կապիտալիզմի իդեոլոգները ստիպված են խոստովանել մարքսիզմի ուժն ու ազդեցությունը, միևնույն ժամանակ քննադատական սուսեր ճոճելով նրա դեմ, կեղծելով նրա էությունն ու հիմնական դրույթները, փորձելով թուլացնել նրա ազդեցությունը մասսաների վրա։ Ամերիկյան ռեակցիոն սոցիոլոգ Չարլզ Ֆրենկելը իր գրքում («Ի պաշտպանություն ժամանակակից մարդու», Նյու-Յորք, 1956) մարքսիստական պատմափիլիսոփայությունը պատմության ըմբռնման մեջ մի առաջաքայլ համարելով, դրա հետ միասին ստահոդ հերյուրանքներ է հորինում մարքսիզմի և կոմունիստական շարժման հասցեին։ Ջինսբերգը խմբավորելով պրոգրեսի վերաբերյալ թեորիաները, գրում է. «Առաջինը մարքսիզմն է, որը XIX դարի պատմափիլիսոփայության այն միակ ձևն է, որ պահպանել է իր ազդեցությունը։ Չնայած, որ մարքսիստները հաճախ ժխտում են «բուրժուական» պրոգրեսի գաղափարը, նրանք այնուամենայնիվ, պահպանում են վաղ ռացիոնալիստների հավատը այն բանի նկատմամբ, որ մարդը կարող է կատարելագործվել։ Նրանք վստահությամբ նայում են դեպի առաջ, դեպի այն դարը, երբ «լիակատար զարգացած կոմունիստական հասարակության մեջ անհրաժեշտության թագավորության հիմքի վրա կծաղկի ազատության թագավորությունը»[1]։ Այս հեղինակը չի կարող չխոստովանել, որ Մարքսը ժամանակակից գիտության լույսի տակ մշակել է պատմության հետազոտության գիտական մեթոդ։ Սակայն իր դասակարգի սահմանափակությունն ու նախապաշարմունքները նրան ստիպում են ժխտել այն, ինչ վաղուց ընդունված է նույնիսկ մարքսիզմի հակառակորդների կողմից։ Մարքսին չի հաջողվել բացահայտել ժամանակակից հասարակության զարգացման տնտեսական օրենքը—այսպես է եզրափակում իր միտքը անգլիական սոցիոլոգը։ Մարքսիզմի այս քննադատը փորձում է հերքել պատմական մատերիալիզմի հիմնական դրույթները։ Եվ քանի որ նա չի բերում ոչ մի փաստարկ, ապա նրա քննադատական փորձերը մնում են սոսկ հայտարարություններ։

Նման դատողությունները հերքվում են հասարակական կյանքի ամբողջ ընթացքով, գիտության տվյալներով, սոցիալիզմի համաշխարհային-պատմական հաղթանակներով։ Բուրժուական կոնցեպցիաների սնանկությունը և մարքսիզմի ուժն ու հզորությունը խոստովանում են կապիտալիզմի շատ պաշտպաններ։ «Մարքսի ամենակարևոր ներմուծումը տեսական փիլիսոփայության մեջ,— գրում է ամերիկյան սոցիոլոգ Լյուիս Ուայթ Բեկը,—նրա պատմահայեցությունն է։ Նրա պատմափիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել պատմաբանների վրա, նույնիսկ նրանց վրա, ովքեր չեն եղել ո՛չ մարքսիստներ իրենց ընդհանուր փիլիսոփայական հայացքներով, ո՛չ կոմունիստներ իրենց քաղաքական հայացքներով»[2]։ Անգամ ավստրիական թեոլոգ Իոհաննես Ֆիշլը գրում է,

[1] M. Ginsberg, The Idea of Progress, էջ 13։
[2] «Փիլիսոփայական հետազոտություն», 1953, էջ 404։

«Կարլ Մարքսը կարողացավ բավականին ներշնչել հավատ դեպի պրոգրեսը և XIX դարի անիծորտակ լավատեսությունը»[1]։

XIX դարի վերջերին, այն ժամանակ, երբ մարքսիզմը բարձր պահած հասարակական պրոգրեսի դրոշը, լուսավորում ու կազմակերպում էր բանվորական մասսաներին, մարդկությանը հղում էր դեպի սոցիալիստական ապագան, բուրժուական հասարակական միտքը սուր շրջադարձ է կատարում, բռնելով սոցիալական պրոգրեսի ժխտման, վարկաբեկման, խեղաթյուրման ուղին։ Դա կապիտալիզմի վերջին փուլի՝ իմպերիալիզմի շրջանն էր, նրա մայրամուտի սկիզբը։

Պրոգրեսի դեմ բուրժուական իդեոլոգիայի կատարած ռեակցիոն շրջադարձի փաստի մասին պերճախոս խոստովանություններ կան բուրժուական շատ սոցիոլոգների ու փիլիսոփաների աշխատություններում։ Նույն Ջինսբերգը այսպես է արտահայտում այդ միտքը. «XIX դարում,—ասում է նա,—տեխնիկայի ու բնագիտության նվաճումների, լավատեսական հայացքների ազդեցության ներքո պրոգրեսի նկատմամբ հավատը շատ պոպուլյար էր. XX դարի սկզբում, սակայն, նշաններ երևացին, որ այդ հավատը լուրջ կերպով խախտվել է և երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում լայնորեն տարածվեց այն տպավորությունը, որ այդ հավատը գրեթե վանվել է դեպի խորտակված առասպելների բնագավառը»[2]։

Եթե իր վերելքի շրջանում բուրժուական միտքը անզոր գտնվեց ըմբռնելու համաշխարհային պատմության ընթացքը, էությունն ու իմաստը, չբացահայտեց պատմական պրոգրեսի օրենքը, ապա իր մայրամուտի, իմպերիալիզմի ու սոցիալիստական ռևոլյուցիայի դարաշրջանում նա անսքող կերպով դրսևորում է իր հակաժողովրդական, հակապրոգրեսիվ էությունն ու տենդենցները։ Դուրս վռնդված պրոգրեսի իդեայի փոխարեն հանդես են գալիս այդ իդեան վարկաբեկող, մերժող, կեղծող զանազան կոնցեպցիաներ, սիստեմներ, հայացքներ։

Համառոտակի հիշատակենք դրանցից մի քանիսը։

Բուրժուական ու մանր-բուրժուական խավերի վրա շատ ազդեցություն են գործել Նիցշեի, նեոկանտականների, Բերգսոնի, Շպենգլերի պատմափիլիսոփայական հայացքները. դրանց հիմնական մտքերը տարբեր վարիանտներով վերարտադրում են մեր ժամանակների բուրժուական շատ մտածողներ։ Պրուսական յունկերության, իմպերիալիզմի ծայրահեղ ռեակցիոն իդեոլոգ, գերմանական փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեն պրոգրեսի ոխերիմ թշնամի է. նրա հայացքների համար բնորոշ են սկեպտիցիզմը, պեսիմիզմն ու հիասթափությունը կյանքի նկատմամբ։

Ինտուիտիվիզմի ականավոր ներկայացուցիչ, ֆրանսիական փիլիսոփա Հանրի Բերգսոնը ժխտելով մարդկային բանականության դերն ու նշանակությունը, մարտնչում է պրոգրեսի գաղափարի դեմ, գուշակություններ է անում քաղաքակրթության կործանման անխուսափելիության մասին՝ տեխնիկայի զարգացման հետևանքով։

Առաջին համաշխարհային պատերազմի և Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ժամանակաշրջանում բուրժուական դաղափարախո-

---

[1] Johan Fischl, Materialismus und Positivismus der Gegenwart, Graz 1953, էջ 79։

[2] M. Ginsberg, The Idea of Progress, էջ 11։

սության մեջ շատ ազդեցիկ էին Օսվալդ Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» գրքում արտահայտված հայացքներն ու կոնցեպցիան։ Գրքի վերնագիրն արդեն սիմվոլիկ էր։ Դա իրոք կապիտալիզմի համաշխարհային սիստեմի ճգնաժամի, նրա մայրամուտի սկիզբն էր։

Խորը սկեպտիցիզմով է համակված Շպենգլերի փիլիսոփայությունը. նա զգում է կապիտալիզմի մոտալուտ մայրամուտը, բայց այն ներկայացնում է որպես համաշխարհային քաղաքակրթության ճակատագրական կործանում։ Այդ ռեակցիոն մարգարեությունը հիմնավորելու համար նա հորինել է այսպես կոչված «լոկալ կուլտուրաների» շինծու տեսությունը, որն ամբողջապես ուղղված է պրոգրեսի, բանվորական շարժման, սոցիալիզմի ու մարքսիզմի դեմ։ Ըստ այդ տեսության, պատմությունը առաջընթաց գծով զարգացող պրոգրես չէ, այլ տեղով ու ժամանակով սահմանափակված, մեկուսացած կուլտուրաների ծագման ու կործանման պրոցես. այդ կուլտուրաներից յուրաքանչյուրը օրգանական կյանքի նմանողությամբ առաջանում է, աճում, կործանվում, քայքայվում։ Այժմ, նրա ասելով, հասել է «Արևմուտքի կուլտուրայի» կործանման դարաշրջանը։ Իր բոնազբոսիկ սխեման անցյալ կուլտուրաների մահացման վերաբերյալ նա ավարտում է հետևյալ եզրակացությամբ. «Այս է պատմության մեջ եղած բոլոր կործանումների իմաստը, որոնց թվին է պատկանում մեր առաջ ամենահստակ կերպով պատկերվող «անտիկ աշխարհի անկումը», և մենք այսօր մեր շուրջը որոշակի զգում ենք հենց մեզ վերաբերող և իր ընթացքով ու տևողությամբ առաջինի հետ նույնական իրադարձության առաջին նշանները, իրադարձություն, որը կլցնի մերձավորագույն հազարամյակի առաջին դարերը և որը կլինի «արևմուտքի անկումը»[1]։ Այդ կործանումը, հեղինակի ասելով, ճակատագրի զորությամբ կվիճակվի ամբողջ «Արևմուտքին»։ Շպենգլերին, գիտեք ինչ, արդեն հայտնի է նույնիսկ այդ կործանման ճիշտ ժամկետը. դա տեղի կունենա երկու հազար թվականի մոտերքը։ Հարկ չկա մանրամասն հերքելու այս մռայլ մարգարեությունը, արդեն այն հերքվել է և ամեն օր հերքվում է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հաղթական պրոգրեսով։ Ճշմարտության հատիկը Շպենգլերի ասածների մեջ այն է, որ իր դարն ապրել է և դեպի մայրամուտ է գնում կապիտալիստական արտադրաեղանակը՝ և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում։

Բնական է, որ Շպենգլերի և շպենգլերականների սոցիալ-քաղաքական հայացքներում խտացրած ձևով է արտահայտվել նրանց հակապրոգրեսիստական, հակաժողովրդական հայացքների ռեակցիոն էությունը։ «Եվրոպայի մայրամուտը» գրքում ատելություն, վախ ու արհամարհանք է սփռված պրոլետարիատի, սոցիալիստական շարժման, ժողովուրդների ակտիվ գործունեության նկատմամբ։ Կեղծելով մարքսիզմի և սոցիալիզմի իմաստն ու նշանակությունը, Շպենգլերը քարոզում է ռեակցիոն ռասիստական գաղափարներ, ճգնելով հիմնավորել պրուսական յունկերների ու միլիտարիստների աշխարհակալական ձգտումները։

Ռևոլյուցիոն գործի և գիտության մեծագույն հանճար Վ. Ի. Լենինը խորապես բացահայտել է շպենգլերականության ռեակցիոն էությունն ու դասակարգային հիմքը մի հակիրճ բնութագրությամբ. «Հին բուրժուական և իմպերիալիստական Եվրոպան, որը սովորել է իրեն համարել երկրի պորտը, նե-

[1] «Եվրոպայի մայրամուտը», հատոր II, էջ 119։

խեց ու պայթեց առաջին իմպերիալիստական սպանդում, որպես չարորակ ուռուցք։ Ինչպես էլ նվնվան այդ առիթով շպենգլերներն ու նրանով հիանալու (կամ թեկուզ զբաղվելու) ընդունակ կրթված քաղքենիները, սակայն հին Եվրոպայի այդ անկումը միայն մի էպիզոդ է համաշխարհային բուրժուազիայի անկման պատմության մեջ, բուրժուազիա, որը հզփացել է երկրագնդի բնակչության մեծամասնության իմպերիալիստական կողոպուտով և ճնշումով։

Այդ մեծամասնությունն այժմ արթնացել է և շարժման եկել, մի շարժում, որը չեն կարող դադարեցնել ամենաուժեղ և «ամենահզոր» տերությունները»[1]։

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ անհամաչափ է կատարվում իմպերիալիզմի ոչ միայն զարգացումը, այլև նրա անկման պրոցեսը։ Մեր դարի 20-ական թվականներին կապիտալիզմը առանձնապես ԱՄՆ-ում որոշ կայունություն ապրեց։ Այստեղ հանդես եկան ամերիկյան նորաթուխ կոնցեպցիաները։ Պատահական չէ, որ հենց ԱՄՆ-ում՝ ինդուստրիայի բուռն զարգացման երկրում, երևան եկավ բուրժուական պրոգրեսի ջատագովության նոր ձև։ Պրոգրեսի պրոբլեմի քննարկումը փիլիսոփայության ու սոցիոլոգիայի բնագավառից փոխադրվեց տեխնիկայի բնագավառ. որպես կապիտալիստական պրոգրեսի մունետիկներ հանդես եկան ինժեներներ և ձեռնարկատերեր Թեյլորը, Ֆորդը և ուրիշներ։ «Աշխատանքի գիտական կազմակերպման սիստեմի» անվան տակ փորձեր արվեցին անցկացնելու բանվորների և ձեռնարկատերերի շահերը հաշտեցնելու, նրանց միջև ներդաշնակություն հաստատելու, սոցիալական պրոգրեսը տեխնիկական պրոգրեսով նենգափոխելու իդեոլոգիան։

Պատերազմից թուլացած, սնանկացած բուրժուական երկրները սկսեցին խոնարհվել Ամերիկայի հզորության առաջ։ Ֆրանսիացի հեղինակ Ժ. Ֆրիդմանը այսպես է նկարագրում այդ երևույթը։ Ամբողջ Եվրոպան հիանում էր ԱՄՆ-ի ինդուստրիալ հաջողություններով, հզոր տեխնիկայով, բարձր կենսամակարդակով։ 1920—1929 թվականների ժամանակաշրջանում Եվրոպան իր հայացքն ուղղեց դեպի Ամերիկա։ Ամերիկանիզմը ճարտարապետության, իրավունքների, ապրելակերպի մեջ։ Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Անգլիայի բուրժուազիան լայնորեն ընդօրինակում էր ամերիկյան ավտոմոբիլները, կինոնկարները, խմիչքները, հագուստը, պարերը, ռոմանները, սպորտը։

Իմպերիալիզմի հետադիմական գաղափարախոսությունը այդ պայմաններում երկու ձևով էր դրսևորվում. եթե ձեռնարկատերերն ու ինժեներները գովերգում էին կապիտալիստական ինդուստրիայի պրոգրեսը, ապա փիլիսոփաները ու սոցիոլոգները շարունակում էին ճակատամարտ մղել սոցիալական պրոգրեսի և դրա մարքսիստական բացատրության դեմ։ Հիտլերյան Գերմանիայում պատմափիլիսոփա Օթմար Շպանը իր «Պայքարող գիտությունը» գրքում հարձակվում է մարքսիզմի դեմ, չթաքցնելով, որ պրոգրեսի մարքսիստական ըմբռնումը հանգեցնում է ռևոլյուցիայի։ «Վերջին հարյուրամյակներում,— տրտնջում է նա,— պրոգրեսը դիտվում էր որպես պատմական պրոցեսի հիմնական ձև»[2]։ Այնուհետև նա շարունակում է, թե պրոգրեսի գաղափարը թափանցել է շատերի գիտակցության մեջ դարվինիզմի, բնագիտության ու տեխնիկական հայտնագործությունների ազդեցության հետևանքով։ Խոստովանելով, որ մասսաների ռևոլյուցիոն շարժման վրա ներգործելու տեսակետից

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 33, էջ 414։
[2] Otmar Spann, Kampfende Wissenschaft, Jena. 1934, էջ 102։

ամենաազդեցիկ թեորիան մարքսիստական ուսմունքն է արտադրողական ուժերի, իսկ դրա հետևանքով նաև տնտեսական պրոգրեսի մասին և այն մասին, որ կապիտալիզմը անխուսափելիորեն պետք է փոխարինվի կոլեկտիվիզմով. Շպանը հարձակվում է այդ ուսմունքի վրա։ Պրոգրեսի գաղափարը, խոստովանում է նա, անչափ վտանգավոր է կապիտալիստական հասարակության տիրող դասակարգի համար և այդ վտանգն այն է, որ այդ իդեան մարդկանց դրդում է կապիտալիստական կարգերի դեմ։

Այս փիլիսոփան սաստիկ վախենում է մասսաների ազատագրական շարժումից, սոցիալիստական ռևոլյուցիայից։ Նա տագնապահար գրում է. «Եթե մենք գործին մոտենում ենք պատմականորեն, ապա պարզվում է, որ պրոգրեսի գաղափարը պատկանում է ամենածանր կուլտուրական ազետների շարքին, որպիսիք իր հետ բերել է լիբերալ-ինդիվիդուալիստական էպոխան։ Որովհետև փոխանակ մարդուն կողմնորոշելու այն ոգով, որ պահպանվի, զտվի և օգտագործվի այն ամբողջ արժեքավորը, ինչ որ ժամանակ առ ժամանակ մեզ տրվում է, պրոգրեսի գաղափարը հարկադրում է մեզ պատմականորեն տրվածը ամենուրեք դիտել որպես մի բան, որ պետք է հաղթահարվի և որի սահմաններից առաջ պետք է անցնի նոր շարժումը։ Սա տանում է դեպի ռելյատիվիզմ, որը չի մնում լոկ գիտության շրջանակներում, այլ անմիջականորեն շոշափում է կյանքը և այստեղ հասցնում հեղաշրջումներ կատարելու համար մշտապես պատրաստ լինելուն, իրոք հեղաշրջումներ կատարելու ձգտելուն, բացահայտ ռևոլյուցիոնության... Այս նկատառումը ապացուցում է պրոգրեսի իդեալի պատմական վտանգավորությունը»[1]։

Այս էր պրոգրեսի իդեայի ճակատագիրը բուրժուական պատմափիլիսոփայության մեջ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը։

Նիցշեի, Շպենգլերի, Շպանի և նրանց հետևողների ամբողջ ուղղության խավարամիտ դատողությունները սոցիալական պրոգրեսի դեմ իրենց խտացրած մարմնացումը և կիրառումը գտան հիտլերականների բարբարոսական գաղափարախոսության և գործունեության մեջ։ Աշխարհի ժողովուրդները երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տեսան, թե համաշխարհային կուլտուրային, քաղաքակրթությանը ավերման ինչ ահավոր վտանգ էր սպառնում ֆաշիզմը, որի գաղափարական զինանոցի մեջ են մտել այդ փիլիսոփաների դրույթները։ Եվ եթե այդ վտանգը հաղթահարվեց, հետ մղվեց և քաղաքակրթությունը փրկվեց, ապա դրանով մարդկությունը պարտական է ամենից առաջ սովետական մեծ ժողովրդի ու նրա բանակի մեծագույն սխրագործություններին, սոցիալիստական կարգին, մի ժողովուրդ, որը փրկեց մարդկությունը, կուլտուրան ու քաղաքակրթությունը ֆաշիստական ավերածություններից և այժմ իր խաղաղ ստեղծագործական աշխատանքով յոթ մղոնանոց քայլերով առաջ է տանում պատմական մեծագույն պրոգրեսի՝ կոմունիզմի անմարելի ջահը։

* * *

Բուրժուական պատմափիլիսոփայական ու սոցիոլոգիական մտքի, իսկ դրա հետ միասին և բուրժուական պրոգրեսի ճգնաժամը, որը որոշակի արտահայտվեց արդեն մեր դարի առաջին տասնամյակներում, հսկայական ուժով ու խո-

[1] Otmar Spann, Kampfende Wissenschaft, էջ 102։

ությամբ երևան եկավ հետպատերազմյան տարիներում։ Բայց այն ընթանում է ոչ թե ուղղագծորեն, այլ այսպես ասած ալիքաձև, արտացոլելով կապիտալիստական աշխարհի տնտեսական ու քաղաքական կյանքի մակընթացությունները ու տեղատվությունները, նրա խորը հակասությունները ու դժվարությունները։

Ինչպես ընութագրված է ՍՄԿՊ XX և XXI համագումարների որոշումներում, ընկ. Ն. Ս. Խրուշչովի զեկուցումներում, ելույթներում, ճառերում, կոմունիստական ու բանվորական պարտիաների 1957 թվականի Մոսկովյան խորհրդակցության դեկլարացիայում և միջազգային կոմունիզմի բազմաթիվ այլ փաստաթղթերում, մեր դարաշրջանի հիմնական ու վճռական իրողությունը սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գոյացումն է, անցումը կապիտալիստական ֆորմացիայից կոմունիստական ֆորմացիային։ Սոցիալիզմի անշեղ վերելքն ու հզորացումը, կապիտալիստական սիստեմի հետ խաղաղ մրցության ընթացքում նրա անվիճելի առավելությունների բազմակողմանի դրսևորումը, միջազգային կոմունիստական շարժման ուժեղացումը և մարքսիզմ-լենինիզմի ազդեցության հսկայական տարածումը, իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը, ժողովրդական մասսաների վճռական դերը իրենց ճակատագիրը որոշելու և միջազգային պրոբլեմները լուծելու գործում, «սառը պատերազմի» և ուժի գիրքերից իմպերիալիստական քաղաքականության սնանկացումը—այս է արդիականության ընդհանուր պատկերը։

Ակնհայտ է, որ մենք գործ ունենք կապիտալիզմի համաշխարհային սիստեմի ճգնաժամի նոր փուլի հետ, երբ ավելի ակնառու է դրսևորվում նրա հակապրոգրեսիստական էությունը։ Ամբողջ առաջադեմ մարդկության համար ավելի պարզ է դառնում, որ «հասարակության իսկական պրոգրեսն ապահովվում է այն հասարակարգում, որը մարդկանց ազատագրում է կապիտալիստական ստրկությունից, երբ աշխատանքի մարդիկ դառնում են իրենց պրոդուկտի տերերը, երբ արտադրամիջոցները պատկանում են ոչ թե մի բուռ շահագործողներին, այլ նորին մեծությանը բանվոր դասակարգին, աշխատավոր ժողովրդին» (Ն. Ս. Խրուշչով, Ճառ Նովոսիբիրսկ քաղաքի միտինգում)։

Այս բոլորը կապիտալիզմի իդեոլոգների ու պաշտպանների հոգու մեջ չէր կարող չառաջացնել խորը անվստահություն ու տագնապի տրամադրություն՝ իր դարն ապրած հասարակարգի ճակատագրի և վախի տրամադրություն՝ սոցիալիզմի վերահաս հաղթանակների նկատմամբ։ Այստեղից գաղափարական տարընթացություններ, խորը վհատություն ու հոռետեսություն բուրժուական գաղափարախոսների շրջանում, վայնասուններ շպենգլերյան և նիցշեական ոգով համաշխարհային քաղաքակրթության կործանման մասին և այլ մռայլ գուշակություններ։

Որոնելով իմպերիալիզմի ստեղծած փակուղուց դուրս գալու ուղիներ, կապիտալիզմի պաշտպանները դիմում են պատմությանը, դատողություններ են անում ներկայի և գուշակություններ՝ ապագայի մասին, սոցիալական դեղատոմսեր են առաջարկում, արտահայտում են հակասական, հաճախ իրարամերժ գրույթներ։ Պարզ է, որ պրոգրեսի գաղափարի վարկաբեկման և աղավաղման ձգտումը, զրպարտությունը սոցիալիզմի, կոմունիզմի հասցեին բուրժուական հասարակական մտքի համար պատահական չեն։ Սակայն այդ բոլոր թեորիաներն ու դեղատոմսերը յուրաքանչյուր քայլափոխում ձախողվում են,

դրսևորելով իրենց սնանկությունը հասարակության պրոգրեսիվ զարգացման մեծ ընթացքի հանդեպ։

Պերճախոս վկայություններ շատ կան։ «Կուլտուրայի մայրամուտի մեջ համոզվածությունը,— գրում է գերմանական սոցիոլոգ Օտտո Ֆայտը «Փախուստ ազատությունից» իր գրքում,— կամ, առնվազն, կուլտուրայի ճգնաժամի համոզմունքը գրեթե ընդհանուր է դարձել եվրոպական հոգևոր աշխարհում»։ «Մեր օրերի պատմափիլիսոփայության մեջ,— գրում է նա,— իշխում է կրոնական լեյտմոտիվը։ Փլուզում, կործանում, անկում, մայրամուտ, աղջամուղջ, վախճան,— այս բառերից չի կարող խուսափել ժամանակակից կուլտուրայի քննադատությանը նվիրված ոչ մի երկ»։ Եվ որպեսզի կասկած չմնա, Ֆայտն ավելացնում է. «Քսաներորդ դարի մարդը վախենում է կործանվել երկրաշարժի ժամանակ, մի երկրաշարժ, որն իր հետ բերում է հին կուլտուրայի խորտակում»[1]։

Ակնհայտ է, որ մենք այստեղ գործ ունենք նեոշպենգլերականության հետ՝ կապիտալիզմի համաշխարհային ճգնաժամի նոր աստիճանում։ Բուրժուական հասարակական մտքի ընդհանուր պատկերը, նրա թշնամանքը մեր դարաշրջանի սոցիալական պրոգրեսի նկատմամբ պակաս ցայտուն չի նկարագրում անգլիական իդեալիստ Հեկտոր Հաուտոնը իր «Անբանականության խրախճանքը» գրքում։ Այս լիբերալ հումանիստը (այդպես է նա իրեն անվանում) տրտնջում է, թե շատ սոցիոլոգներ պրոգրեսը առասպել են համարում, մերժում են հին «լավ ժամանակների» տրադիցիաները. ասում են, թե վտանգը գիտությունից ու տեխնիկայից է գալիս, թե անխուսափելի է քաղաքակրթության ատոմային խորտակումը և այլն։ Հաուտոնը այսպես է հաղորդում այն ծայրահեղ հոռետեսների միտքը, որոնց դեմ նա բանակռիվ է մղում. «Մենք պետք է երես դարձնենք գիտությունից և բանականությունից, բոլոր իզուր հույսերից, որովհետև մենք մտել ենք վհատության դար։ Այս է արամադրությունը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բանականությունից խուսափում, գիտության նկատմամբ ատելություն, հիասթափություն և վհատություն, որոնք տանում են դեպի ծայրահեղ նիհիլիզմ։ Վերադարձ դեպի առավել խավարամոլ հավատ, բացահայտ դիվաբանության վերածնություն... վերադարձ դեպի Տերտուլյանոսի՝ «հավատում եմ, որովհետև աբսուրդ է» հանձին Կերկեգորի պաշտամունքի, մոայլ պեսիմիզմ...»[2]։ Ավելի պերճախոս խոստովանություն բուրժուական մտքի անկման և սնանկացման վերաբերյալ դժվար է պատկերացնել։

Այսպիսի խոստովանություններ շատ կան։ Ամերիկացի նեոթոմիստ Մարտինը քննադատելով Բ. Ռասսելին և մյուսներին, ընդունում է, որ տարրնթացությունն ու ճգնաժամը թաղավորում են կապիտալիստական քաղաքակրթության գաղափարախոսության բոլոր բնագավառներում, մասնավորապես արվեստի և գիտության մեջ։

Ամերիկացի պատմաբան Կվինսի Հոուվը «Մեր օրերի համաշխարհային պատմությունը» գրքում (հատոր 2), որտեղ նա շարադրում է 1918—1938 թվականների իրադարձությունները, նույնպես արձանագրում է գրականության և արվեստի անկումը բուրժուական աշխարհում, դա անվանելով «արևմտյան

[1] Otto Veit, Die Flucht vor der Freiheit, München, 1947, 3, 4 և 222 էջերը։
[2] Hawton H., The Feast of Unreason, London, 1952, էջ 4։

մարդու» ճգնաժամ, որը, նրա ասելով, կորցրել է հավատը դեպի բանականությունը և դեպի պրոգրեսը։ Մի այլ պատմաբան պնդում է, թե ետպատերազմյան շրջանն այլ բան չէ, քան շարժում վատից դեպի վատթարագույնը։

Երկու սիստեմների կողմնակիցների ժամանակակից իդեոլոգիական պայքարում կապիտալիզմի պաշտպանները ամեն կերպ ճգնում են թեկուզ ոտի էկերպ արդարացնել այդ զառամյալ հասարակարգի հետագա գոյությունը, նույնիսկ «գիտականորեն» հիմնավորել նրա առավելություններն ու «կենսունակությունը»։ Փորձեր են արվում վարկաբեկելու սոցիալիզմը, կառուցում են բազմազան տեսություններ կամ հայացքների համակարգեր, խեղաթյուրում են պրոգրեսի հմայիչ պրոբլեմը, աղավաղված ձևով են ներկայացնում պատմության ընթացքը, հաճախ դիմում են սոփեստությունների. փորձում են սոցիալական պրոգրեսի պրոբլեմը նենգափոխել «սոցիալական փոփոխություն» կատեգորիայով։ Մյուսները կապիտալիզմի հակասություններն ու արատները փորձում են բխեցնել՝ կամ մարդու բիոլոգիական հատկություններից, կամ տիեզերական օրենքներից, կամ կրոնական ու բարոյական գործոններից, կամ էլ ուղղակի գերբնական առեղծվածային ուժերից։ Նորանոր տարբերակներով վերածնում են պատմության, գիտության, սոցիալիզմի կառուցման փորձով վաղուց հերքված անցյալի հակագիտական և հետադիմական տեսակետները։ Բոլոր դեպքերում նրանց միտքը պտտվում է կապիտալիստական հասարակարգի կախարդական շրջանում, ինչպես սկյուռը՝ անիվում։ Հնարավորություն չունենալով մի հոդվածում մանրամասնորեն քննարկելու այդ ամբողջ նյութը, այն ամփոփ կերպով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Ծայրահեղ հոռետեսները լինելով սոցիալական պրոգրեսի մոլի քննադատներ, մերժում են պրոգրեսի գաղափարը, համաշխարհային քաղաքակրթության կործանում են գուշակում, փորձում են մարդկանց համոզել, թե պատմությունը ենթակա է պարբերական կատաստրոֆների։ Ընդ որում դրանցից շատերը կատաստրոֆների անխուսափելիություն բխեցնում են տեխնիկայի ու գիտության զարգացումից։

2. Կապիտալիզմի մյուս ջատագովները «ժողովրդական կապիտալիզմ» մոդայական տեսության պրոպագանդիստներ են և դրա շրջանակներում են տեսնում պրոգրեսի իրագործումը։ Դրանց թակարդն ընկնելով, այդ առասպելն ըստ էության կրկնում են բոլոր գույնի ու կերպի ռեֆորմիստներն ու մարքսիզմի ռևիզիոնիստները։

3. Սոցիալական պրոգրեսի երրորդ կարգի քննադատների համար բնորոշ է այն, որ նրանք խեղաթյուրելով պրոգրեսի գաղափարը, այն նենգափոխում են «սոցիալական փոփոխություն» հասկացությամբ, մյուսները վերածնում են պատմության շրջապտուտային զարգացման կամ լոկալ քաղաքակրթությունների տեսությունը։

Մի քանի վկայություններ։

Պատմական պրոգրեսի գաղափարը, ասում են, ընդհանուր օրենք չէ, այլ մի միջադեպ, որը հատուկ է եղել անցյալին, կամ՝ դա հավատի գործ է և ոչ թե գիտության։ Ամերիկյան ռեակցիոն սոցիոլոգ Ռուշը հայտարարում է, թե կապիտալիզմով պրոգրեսն ավարտվում է։ Օտտո Ֆայտը պնդում է, թե պրոգրեսը դա նախիվ հավատ է, նախիվ լավատեսություն։

Խճճվելով հասարակական պրոցեսների հակասություններում, զգալով և գիտակցելով կապիտալիզմի կործանման և կոմունիզմի հաղթանակի անխու-

սափելիությունը, պրոգրեսի շատ հակառակորդներ բարբաջում են ամբողջ համաշխարհային քաղաքակրթության կործանման մասին։ Արևմտյան Գերմանիայի մամուլում հաճախ էքսկուրսներ են կատարվում պատմության բնագավառ, փորձեր են արվում հիմնավորել այն միտքը, թե մարդկության պատմությունը և կուլտուրան գնում են վարընթաց ուղղությամբ, դեպի կործանում։ Գերմանիայի Միասնական Սոցիալիստական պարտիայի չորրորդ համագումարում արևմտա-գերմանական «Դի Վելտ» թերթից բերվեց մի քաղվածք, որտեղ ասված է. «Երբ վերջանում է պատմական մի դարաշրջան, սովորաբար վրա է հասնում մեծ մահացում։ Սա մի խորհրդավոր պրոցես է, որը չի կարելի մեկնաբանել, ինչպես չի կարելի բացատրել ավերակներն ու փլուզումները։ Շատ հեշտ է ասել, թե այդ զոհերի մեղքը միայն պատերազմներն են, և որոնել այդ պատերազմների հանցավորներին։ Դրանք պատմական կատաստրոֆներ են, որոնք փուլ են գալիս մարդկության գլխին, ինչպես առաջ փուլ էին գալիս տարերային աղետները կամ համաճարակները»։

Գերմանական միլիտարիստներին, պատերազմի բոլոր հրձիգներին, իհարկե, ձեռնտու է ժողովրդի հիշողությունից դուրս վանել երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառած ավերածությունների, ֆաշիստական բարբարոսների հանցագործությունների հիշողությունը։ Ուստի և նրանք արգելում են ժողովուրդներին որոնել այդ պատերազմի կազմակերպիչներին, փորձում են «գիտական տեսության» կերպարանք տալ ագրեսիվ պատերազմներն արդարացնող կատաստրոֆների անխուսափելիության վերաբերյալ շինծու տեսակետներին։

Պակաս միտումնավոր և շինծու չեն այն սոցիոլոգների մեկնաբանությունները, որոնք իմպերիալիստական ավերածությունները, կապիտալիզմի ստեղծած փակուղին փորձում են բացատրել գիտության ու տեխնիկայի զարգացմամբ։ Նյութական պրոգրեսը, վշտալից պնդում է Օտտո Ֆայտը, բարերարությունից աղետների և տառապանքների աղբյուր է դարձել։ «Ատոմային դարաշրջանը վերջնականապես պայթեցրեց արևմտյան քաղաքակրթության հիմնական նախադրյալներից մեկը՝ պրոգրեսի անխուսափելիության նկատմամբ եղած հավատը»,— գրում է ամերիկյան սոցիոլոգ Միքայել Ամբայնը։ Տեխնիկական և գիտական պրոգրեսը նրանց կարծիքով խորտակիչ ուժ է, որ պետք է կործանման հասցնի։ Անգլիական գրող Օլդոս Հաքսլին իր վեպերում գործն այնպես է պատկերացնում, թե բոլոր չարիքների աղբյուրն այն է, որ մարդը ձգտում է ճանաչել հասարակության զարգացման պրոցեսը և ազդել նրա վրա։ Այս ոգով հանդես եկան բուրժուական գաղափարախոսները Քաղաքական գիտությունների ասոցիացիայի միջազգային 4-րդ կոնգրեսում (Հռոմ, 1958, սեպտեմբեր)։ Նույնիսկ լրջմիտ մտածողները պնդում էին, թե աղետների և չարիքների աղբյուրը գիտությունն է. «գիտնականները վտանգավոր խաղով են զբաղված»,— ասում էին նրանք։

Այս ամենը հակասում է մարդկության բարձր հումանիստական ձգտումներին։ Առաջավոր մարդիկ միշտ էլ երազել են գիտության ու տեխնիկայի անկաշկանդ առաջադիմության մասին, այն դիտելով մարդուն բարձրացնելու, նրան հզորացնելու, նրա տառապանքները վերացնելու տեսակետից։ Հին հույների ստեղծագործական երազանքը կերտել է առասպելական Պրոմեթեոսի կերպարը, որը աստվածներից առևանգելով կրակը (կուլտուրայի սիմվոլ) հանձնել է մարդկանց և դրա համար սոսկալի տանջանքների ենթարկվել.

XVII դարի մատերիալիստ Բեկոնը «Մեծ Ատլանտիդա» վեպում պատկերում է արտադրողական ուժերի ապագա զարգացումը, որը երջանկություն պետք է բերի մարդկանց. հանճարեղ Լեոնարդո դա Վինչին մոտ հինգ դար սրանից առաջ կազմել է թռչող ապարատների նախագիծ, որով մարդը պետք է երկինք բարձրանա. բոլորին հայտնի են Ժյուլ Վեռնի ֆանտաստիկ վեպերը, որտեղ նա կռահել է ժամանակակից տեխնիկայի շատ հայտնագործություններ։ Եվ ահա պրոգրեսի թշնամիները XX դարի կեսերին կապիտալիզմի հրեշավոր արատների մեղքը գցում են գիտության ու տեխնիկայի վրա։ Այսպես են փիլիսոփայում միջնադարյանության մոլի իդեոլոգ Ն. Բերդյաևը, գերմանական էքզիստենցիալիզմի ներկայացուցիչ Կ. Յ. Յասպերսը, պրագմատիստ Ռ. Զեյդենբերգը և շատ ուրիշներ։ Վերջինս ասում է, որ ամբողջ չարիքը մեքենան է, ուստի և պետք է դանդաղեցնել դրա զարգացումը։ Սակայն պարզ է, որ գիտությունն ու տեխնիկան այստեղ մեղք չունեն. նրանք մարդու երջանկության համար են ստեղծված, նրանցով հպարտանում է մարդկությունը, և եթե նրանք չարիք են բերում, ապա դրա մեղքը ընկնում է իր դարն ապրած կապիտալիզմի վրա, որը բարիքը չարիքի է վերածում։

Ամերիկյան սոցիոլոգ Քելլերը բավական ճիշտ է նկատում այն փաստը, որ Ամերիկայի իսկական տերերը գիտության ու տեխնիկայի նվաճումներից չարիք են ստեղծում։ Նա արձանագրում է, որ Ամերիկայում կորցրել են հավատը դեպի պրոգրեսը։ Իր՝ «Պրոգրեսի նշանակությունը» աշխատության մեջ (Նյու-Յորք, 1955) նա բավական լրջմիտ զուգադրություն է անցկացնում տեխնիկայի զարգացման բնագավառում ԱՄՆ-ում և Սովետական Միությունում։ Նա գրում է. «Նյութականի և բարոյականի ներդաշնակությունը Սովետական Միության համար հեղինակություն է ստեղծում սկսած 1920-ական թվականներից և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, որովհետև արտասահմանում բոլորը զգում էին, որ ռուսները զարգացնում են իրենց նյութական ռեսուրսները, ամբողջ մարդկության օգտին ամենալայն նպատակներ հետապնդելով։ Մյուս կողմից ամերիկացիների մասին ասում են, որ նրանց հնարագիտությունը նրանց լայն նյութական ռեսուրսներ տվեց, բայց դրական իդեալների բացակայությունը նրանց զրկում է այդ ռեսուրսներն օգտագործել այնպիսի նպատակների համար, որոնք դուրս են գալիս անմիջական մեխանիկական օգտագործման շրջանակներից»։ Այս խոստովանությունը բուրժուական լիբերալ մտածողի համար պատահական չէ։ Այսպիսի տեղեր նրա գրքում շատ կան։ Բերենք մեկ քաղվածք ևս. «Այդպիսի (ատոմային էներգիան բարիքներ արտադրելու համար օգտագործելու — Հ. Ա.) ծրագիր մշակելու փոխարեն մենք գործ ունենք այս մոմենտում, երբ գրվում են այս տողերը, սպառազինման վազքի մի պաշտոնական ծրագրի հետ, որը կարող է միայն խորացնել մեր նյութական տիրապետության և բարոյական սնանկության միջև եղած անդունդը» (էջ 57)։ Իհարկե, բուրժուական մտածողը չի թափանցում հարցի արմատը, չի ցույց տալիս, որ այդ չարիքների աղբյուրը կապիտալիստական մոնոպոլիաների տիրապետությունն է, շահամոլությունը, դաժան մրցակցությունը։ Սակայն նրա խոստովանությունը բուրժուական մտքի սնանկության մասին պերճախոս է։

Այդ փաստը չեն կարող չնկատել խոշոր գիտնականներն ու հումանիստ մտածողները։ Որ կապիտալիզմը հաճախ չարիք է դարձնում գիտության ու տեխնիկայի հիանալի նվաճումները, օգտագործում դրանք ոչ թե այդ հայտ-

նպատակների բարերար ու բնական նպատակների համար, այլ ուղղում է մարդկության դեմ, կազմակերպում է ավերիչ պատերազմներ, խորհրդային արդելակում է քաղաքակրթության պրոգրեսը՝ այդ շատ լավ նկատել է մեր ժամանակների մեծ գիտնական Ալբերտ Այնշտայնը։ Նա դառնորեն խոստովանում էր, որ մարդկային աշխատանքը տնտեսող և հեշտացնող տեխնիկական գիտելիքներն ու նվաճումները այն արդյունքը չեն տալիս, ինչ որ նրանք պետք է բնականորեն տային։ Նրանք այժմ, ասում է նա, քիչ երջանկություն են բերում։ Դիմելով ուսանողներին, Այնշտայնը բացատրում էր, որ գիտական և տեխնիկական գործունեության գլխավոր առարկան պետք է լինի մարդը և նրա ճակատագիրը. դիագրամների և հավասարումների հետևը չպետք է մոռանալ մարդուն։

Այն տեսակետը, թե պատմությունն ընդհանրապես սոցիալական փոփոխությունների և ոչ թե սոցիալական պրոգրեսի պրոցես է, ցայտուն կերպով հանդես եկավ սոցիոլոգների միջազգային 3-րդ կոնգրեսում (Ամստերդամ, 1956)։ Պրոֆ. Ջինսբերգը առաջարկում էր խոսել ոչ թե պրոգրեսի, ոչ թե զարգացման, այլ ընդհանրապես փոփոխության մասին։ Արևմտա-գերմանական պատմափիլիսոփա Ֆոն Վիզեն նույն կոնգրեսում փորձում էր հիմնավորել այդ թեզը։ Նա ասում էր, թե «սոցիալական փոփոխություններ» տերմինը մեր ժամանակներում համարյա թե լիովին փոխարինել է «էվոլյուցիա և զարգացում» տերմիններին, որոնք մինչ այդ շատ տարածված էին, ճիշտ այնպես, ինչպես նա է՛լ ավելի մեծ չափով փոխարինել է «պրոգրես» տերմինին... «Սա շատ ուշագրավ է, քանի որ «էվոլյուցիա» (կամ նրա հոմանիշը՝ «զարգացում») տերմինի փոխարինումը «փոփոխություն» տերմինով արտահայտում է կենսական և սոցիալական փոփոխությունների ավելի զգույշ և ավելի սկեպտիկ գնահատությունը...» (Կոնգրեսի նյութերը, էջ 2)։ Այդ պատմափիլիսոփաները փորձում են տարբերել սոցիալական պրոգրեսը սոցիալական փոփոխությունից և օբյեկտիվ չափանիշ չգտնելով դրա համար, սուբյեկտիվ, կամայական չափանիշ են մտցնում. որպես թե պրոգրեսը այն տեսակ փոփոխություն է, որը բավարարում է մարդկանց բարոյական պահանջները։

Այսպես, ուրեմն, բուրժուական մտածողը հաշվի է առնում ոչ թե XX դարի վիթխարի սոցիալական փոփոխությունները և ամենից առաջ սոցիալիզմի հաղթանակը ՍՍՌՄ-ում, նրա կառուցումը Չինաստանում և ժողովրդական դեմոկրատիայի բոլոր երկրներում, որտեղ աշխատում և գործում են մեկ միլիարդից ավելի մարդ, ոչ թե գիտության և տեխնիկայի աննախընթաց առաջխաղացումը. նրա համար սոցիալ-հոգեբանական հիմք է հանդիսանում կասկածամտությունը և զգուշավորությունը, այսինքն վախը պատմական մեծ պրոգրեսի հանդեպ։ Սակայն այս վերջինս զգուշավորություն և հոռետեսություն չի հանդուրժում և առաջ է գնում իր ճանապարհով, հաղթահարելով բոլոր հետադիմական ուժերի դիմադրությունը։

Ժամանակակից բուրժուական պատմափիլիսոփայության ու սոցիոլոգիայի մեջ ամենամոդայական, բայց և ամենաշինծու նորամուծությունը «ժողովրդական կապիտալիզմի» պրոպագանդան է։ Այդ կոնցեպցիան, ըստ նրա հեղինակների, կոչված է «հերքելու» մարքս-լենինյան ուսմունքը կապիտալիզմի հակասությունների սրման և սոցիալիզմի համաշխարհային հաղթանակի անխուսափելիության մասին, պճնազարդելու մոնոպոլիաների տիրակալությունը։ Բնորոշ է հետևյալը. եթե ոմանք փորձում են սոցիալական

ДА-12.306.

պրոգրեսի գաղափարը հեղձամահ անել, «սոցիալական փոփոխություն» հասկացության մշուշում, ապա մյուսները կամավոր կուրություն են երևան բերում մեր էպոխայի մեծագույն փոփոխության՝ սոցիալիստական վերափոխումների հանգեպ, միևնույն ժամանակ փորձում են ներկել կապիտալիստական հասարակարգը, երկինք բարձրացնելով որոշ երկրների, գլխավորապես ԱՄՆ-ի էկոնոմիկայի, որոշ վերելքը, կենսամակարդակի համեմատաբար բարձր աստիճանը։ Այս հիմքի վրա կառուցվում է «նեոկապիտալիզմի» առասպելը. կապիտալիզմն այնքան է փոխվել, պնդում են այս առասպելի հեղինակները, որ դադարել է կապիտալիզմ լինելուց, դարձել է «ժողովրդական կապիտալիզմ», «դեմոկրատական կապիտալիզմ», «մարդասիրական կապիտալիզմ»։ Այն հաղթահարել է կամ հաղթահարում է իր ներքին հակասությունները և իր շրջանակներում իրականացնում է իսկական սոցիալական պրոգրեսը։ Այսօրվա կապիտալիզմն այն չէ, ինչ Մարքսն էր պատկերացնում — այսպես են կեղծում իրականությունը կապիտալիզմի բազմաթիվ իդեոլոգներ ԱՄՆ-ում, Արևմտյան Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլ երկրներում։

Այս առասպելն այն պակասությունն ունի, որ իսպառ հերքվում է հենց իրենց, բուրժուական տնտեսագետների ու սոցիոլոգների բերած փաստական տվյալներով, պաշտոնական փաստաթղթերով և մարքսիստական անալիզով։ «Արդյունաբերական նոր ռևոլյուցիայի» պրոպագանդիստներից մեկի՝ Ֆրից Շաեռնբերդի տվյալներով տնտեսական և քաղաքական իշխանությունը կապիտալի երկրներում կենտրոնացած է մոնոպոլիաների ձեռքում։ ԱՄՆ-ի 135 կորպորացիաներ արտադրում են այդ երկրի ամբողջ արդյունաբերական արտադրության 45%-ը, 250 ընկերություններ արտադրում են այնքան, ինչքան տալիս էր երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ ԱՄՆ-ի ամբողջ արդյունաբերությունը։ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և այլ երկրների 1000—1500 մոնոպոլիաներ վերահսկում են համաշխարհային ամբողջ արդյունաբերական արտադրության կեսը[1]։ Նույնիսկ «ժողովրդական կապիտալիզմի» մոլի գովերգուները, փառաբանելով կապիտալիստական պրոգրեսը, միևնույն ժամանակ այնքան վերապահումներ են անում ու կապիտալիզմի արատներ նշում, որ աննկատելի կերպով հերքում են իրենց իսկ դրույթները։ Միջազգային տնտեսագիտական ասոցիացիայի առաջին կոնգրեսում (Հռոմ, 1956, սեպտեմբեր) Պիոս XII պապը առարկում էր արդյունաբերության հետագա զարգացման դեմ, ասելով, որ կապիտալիստական աշխարհի դժվարությունները պայմանավորված են դրա պրոգրեսով։

Բուրժուական տնտեսագետ Վայները նույն կոնգրեսում թվարկում էր պրոգրեսը արգելակող մի շարք արատներ։ Մյուս տնտեսագետները (օրինակ, Դ. Ռոբերտսոնը իր «Ստաբիլությունը և պրոգրեսը» զեկուցման մեջ), Ֆ. Պերրոն ամեն կերպ փորձում էին կապիտալիզմի դժվարությունները ներկայացնել որպես աննշան բաներ, որոնք հեշտությամբ կհաղթահարվեն։ ԱՄՆ-ում «ժողովրդական կապիտալիզմ» թեմային նվիրված բազմամարդ մի դիսկուսիայում (1956) մի շարք տնտեսագետներ, գուցե հակառակ իրենց կամքի, ստիպված էին արձանագրել կապիտալիզմի այնպիսի խոցեր, ինչպիսիք են՝

[1] Տե՛ս Sternberg F., Die militarische und die industrielle Revolution, Berlin, 1957, (170—173 էջերը)։

էկոնոմիկայի անկայունությունը, գործազրկությունը, բնակչության աղքատությունը, դեպրեսիան, ինֆլյացիան, բնական ռեսուրսների դիշատչական օգտագործումը և այլն, ճիշտ է, առաջարկելով դրանք վերացնելու զանազան դեղատոմսեր։ Սոցիոլոգների 3-րդ միջազգային կոնգրեսում Կոլումբիական համալսարանի պրոֆ. Ու. Ֆրիդմանը իր զեկուցման մեջ համոզիչ կերպով ջրեց այն հայացքը, ըստ որի բանվորներն ու մանր սեփականատերերը ակցիաներ ձեռք բերելով, դառնում են «ժողովրդական կապիտալիզմի» գործակից։ Նա ասաց. «Հաճախակի արվող այն պնդումները, թե ակցիաների լայն տարածումը մանր սեփականատերերի շրջանում՝ արդյունաբերական դեմոկրատիայի նշան է,— իհարկե ֆիկցիա է» (Կոնգրեսի նյութերը, հատ. 1—2, Ֆրիդմանի զեկուցումը, էջ 46)։

Ամփոփելով ԱՄՆ կատարած իր պատմական այցը, Ն. Ս. Խրուշչովը իր դիպուկ բնութագրություններում ցույց տվեց «ժողովրդական կապիտալիզմի» հակաժողովրդական էությունը և դրա պրոպագանդիստների դատողությունների անհիմնությունը։ «Բնորոշ է,— ասաց ընկ. Ն. Ս. Խրուշչովը Վլադիվոստոկ քաղաքի միտինգում,— որ Ամերիկայում շատ գործիչներ այնտեղ գոյություն ունեցող հասարակարգը չեն անվանում կապիտալիզմ, այլ հորինում են այնպիսի անուններ, ինչպիսիք են՝ «ժողովրդական կապիտալիզմ», «դեմոկրատական կապիտալիզմ», «մարդասիրական կապիտալիզմ»։ Ընկ. Խրուշչովն այդ անվանում է հակաբնական, որովհետև՝ «ով չգիտե, որ կապիտալիզմն ապրում է միլիոնների աշխատանքի դաժան շահագործման հաշվին։ Մեծ Մարքսը տվեց հասարակության զարգացման իսորը գիտական վերլուծությունը, և կյանքը լիովին հաստատեց նրա թեորիան»։ Ն. Ս. Խրուշչովի ելույթներում ամփոփված է կապիտալիզմի ճակատագրում տեղի ունեցող տենդենցը՝ այն, որ լայն մասսաներն ավելի ու ավելի են հասկանում նրա հակաժողովրդական էությունը։ Միլիարդատեր Հարիմանը խոստովանելով, որ Ասիայի ժողովուրդները կապիտալիզմի հետ կապում են գաղութարարությունը, ճիգ է թափում ապացուցելու, որ այդ այդպես չէ։ Բայց այդ մանյովրը քողազերծ արվեց ընկ. Խրուշչովի կողմից։ «Այժմ,— ասաց նա Նովոսիբիրսկ քաղաքի միտինգում,— նույնիսկ կապիտալիստական պետությունների որոշ գործիչներ սկսում են հասկանալ, թե որքան անժողովրդական է կապիտալիզմը աշխատավորների աչքում։ Պատահական չէ, որ նրանք հնարում են ամեն տեսակի նոր տերմիններ, նոր անուններ, ինչպես օրինակ, «ժողովրդական կապիտալիզմ» «մարդասիրական կապիտալիզմ», որպեսզի խաբեն աշխատավորներին, թյուրիմացության մեջ դցեն նրանց»։

Մտքի փակուղուց դուրս գալու ջանքեր կատարելով, մի շարք սոցիոլոգներ և պատմաբաններ վերածնում են հասարակության շրջապտույտային ընթացքի, լոկալ քաղաքակրթությունների կոնցեպցիան։ Ամերիկյան պրոֆեսոր Էրրագոնը ուտոպիա է համարում հասարակության վերընթաց, առաջընթաց, այսինքն՝ պրոգրեսիվ զարգացման տեսությունը, բայց դրա փոխարեն առաջարկում է այն թեզը, թե հասարակության զարգացումը շրջապտույտ է գործում, և կապիտալիստական հասարակության զարգացման ավարտումից հետո պետք է սկսվի վերադարձ դեպի ելակետը։ Ամերիկյան մի այլ սոցիոլոգ՝ Ռայտը իր «Պատերազմի հետազոտումը» գրքում (Չիկագո, 1944) պնդում է, թե պատմությունը չի գնում վերընթաց կամ վարընթաց գծով, այլ շրջապտույտ է գործում, և նա փորձում է տալ շրջապտույտի իր սխեման, ըստ որի քաղաքակրթությունն անցել է երեք շրջան. հերոսական շրջան, կոնֆլիկտների

շրջան և հավասարակշռության վերականգնման շրջան։ Գերմանական սոցիոլոգ Էռնստ Վագեմանը իր «Աշխարհի ապագան» (Դյուսելդորֆ, 1953) գրքում պաշտպանում է շրջապտույտի իր այլանդակ կոնցեպցիան։

Անկասկած, բուրժուական աշխարհում ամենատարածված շրջապտույտային կոնցեպցիայի մի այլազանությունն է ներկայացնում անգլիական հայտնի պատմաբան և սոցիոլոգ Առնոլդ Թոյնբիի՝ լոկալ քաղաքակրթությունների տեսությունը, որը նա փորձում է հիմնավորել պատմական մեծ նյութի հիման վրա, հիմնականում զարգացնելով Շպենգլերի կոնցեպցիան։ Ըստ Թոյնբիի պատմափիլիսոփայության՝ պատմության պրոցեսը միասնական և պրոգրեսիվ զարգացում չէ, այլ մեկուսացած քաղաքակրթությունների ժողովածու։ Ինչպես և Շպենգլերը, Թոյնբին էլ կարծում է, որ այդ քաղաքակրթությունները (թվով երկու տասնյակից ավելի) ծագում, աճում, կործանվում են. Թոյնբին ևս իր նախորդի նման ժխտում է ժողովրդական մասսաների դերը պատմության մեջ և կուլտուրայի կերտող է համարում տիրող դասակարգի վերնախավին, ընտրյալ փոքրամասնությանը։ Թոյնբին փորձում է հիմնավորել հետևյալ եզրակացությունները. 1) պետք է հրաժարվել գիտության, հասարակարգերի, տեխնիկայի պրոգրեսի գաղափարից, 2) արևմտյան քաղաքակրթությունն իր վերասերման նախօրեին է գտնվում և այդ վերասերումը կարող է կատարվել քրիստոնեական կրոնի հիման վրա, 3) արևմտյան տերությունները պետք է միանան, ԱՄՆ-ի գլխավորությամբ կազմեն մեկ համաշխարհային պետություն, ընդդեմ Սովետական Միության և Չինաստանի «արևմտյան քաղաքակրթությունը» պաշտպանելու համար։ Այս բոլոր սխեմաներն ու կոնցեպցիաները ուղղված են ինչպես սոցիալիզմի, այնպես էլ իրենց երկրների սոցիալիստական ու պրոգրեսիվ շարժումների դեմ։

Սակայն արդեն ինքնին հակապրոգրեսիստական այս հետևությունները չափազանց լիբերալ թվացին ծայրահեղ ռեակցիոներներին. Թոյնբիի դեմ հանդես եկավ անգլիական պատմաբան, մարտնչող կաթոլիկ Ռուպերտ Ջերոլդը իր «Մուտը Արևմուտքի մասին» բրոշյուրով (Նյու-Յորք, 1954)։ Թոյնբիին անվանելով հետպատերազմյան Շպենգլեր, Ջերոլդը նրա եզրակացությունը արևմտյան քաղաքակրթության վերասերման մասին համարում է փիլիսոփայական կապիտուլյացիա կոմունիզմի հանդեպ, արևմտյան քաղաքակրթության դիսկրեդիտացիա, շպենգլերյան «Եվրոպայի մայրամուտը» գրքի ոգեշնչիվ։ Ֆալսիֆիկացիայի ենթարկելով պատմությունը, Ջերոլդը գովաբանում է Արևմուտքի «բարերարությունները»։ Կապիտալիզմը ջատագովելու ոգով շրջապտույտի կոնցեպցիաների դեմ առարկություններ են անում նաև մի շարք այլ փիլիսոփաներ։

* * *

Սոցիոլոգիական այն ընդարձակ նյութը, որի միայն մի մասը մենք հիշատակեցինք մեր հոդվածում, անվիճելիորեն և բազմակողմանի հաստատում է լենինյան այն դրույթի խորը ճշմարտացիությունը, որ սոցիալական պրոգրեսի դեմ ուղղված հայացքները կապիտալիստական հասարակարգի պատմական դատապարտվածության օբյեկտիվ փաստի գաղափարական արտացոլումն է այդ հասարակարգի երկրպագուների գիտակցության մեջ։ Եվ իրոք, մենք այստեղ գործ ունենք ոչ թե առանձին մտածողների պատահական մոլորությունների կամ սխալմունքների, ոչ թե կապիտալիզմի իդեոլոգների

անձնական անկարողության կամ առանձին երկրների սպեցիֆիկ ազգային «ոգու» դրսևորումների հետ։ Մեր առաջ է համաշխարհային բնույթի իրողություն. հասարակական պրոգրեսի հասցեին կարդացվող դամբանականները վկայում են, որ կապիտալիզմը մեծապես խանդարում — արգելակում է այն։

Մինչդեռ պատմական պրոգրեսը կանգ առնել չի կարող. այդ ապացուցվում է սոցիալիզմի աշխարհացունց նվաճումներով կյանքի բոլոր բնագավառներում, այդ հիմնավորված է մարքս-լենինյան ուսմունքով, այդ բանը դիտակցում են կապիտալիստական երկրների լրջմիտ, խոհուն, հեռատես գործիչներն ու մտածողները։ Ուստի և սխալ կլիներ կարծել, թե բուրժուական աշխարհում կան միայն սոցիալական պրոգրեսի քննադատներ և հակառակորդներ։ Պրոգրեսն ունի իր պաշտպանները ոչ միայն ի դեմս մարքսիստների, կոմունիստների, այլև ի դեմս ոչ-կոմունիստ առաջադեմ շատ գործիչների և մտածողների։ Նրանք լավ են դիտակցում, որ կոմունիզմի ծավալուն շինարարության, գաղութային բազմաթիվ երկրների ազատագրական հզոր շարժման, ատոմային և ջերմամիջուկային էներգիայի, արհեստական արբանյակների ու կոսմիկական հրթիռների մեր դարաշրջանում ժխտել հասարակության հետագա պրոգրեսի հնարավորությունը, նշանակում է դիտավորյալ աչք փակել դարաշրջանի մեծագույն պրոցեսների հանդեպ, դեմ գնալ պատմության և արդիականության ակնհայտ փաստերին և բացահայտորեն ընդունել սեփական մտքի սնանկությունը։

Ընդհանուր փիլիսոփայական առումով վերցրած՝ պրոգրեսի քննադատների կոնցեպցիաներն ու դատողությունները կառուցված են մեթոդոլոգիական խախտած հիմքերի վրա, որոնց քննարկումը մեր հոդվածի նպատակադրումից դուրս է։ Հիշատակենք միայն, որ այդ հիմքերը գերազանցապես հանգում են պատմական պրոցեսի իդեալիստական կամ զուտ նատուրալիստական, վոլյունտարիստական կամ ֆատալիստական, մետաֆիզիկական ըմբռնմանը։ Դրա հետ միասին ժողովրդական մասսաների դերի ինդիվիդուալիստական մեկնաբանումը այդ աշխարհըմբռնման բաղկացուցիչ մասն է։

Հասարակական-պատմական պրոգրեսի ամենաամբողջական գիտական տեսությունը տվել է մարքսիզմ-լենինիզմը, որի դրոշի տակ մարդկության մեկ երրորդից ավելին, Էլբայի ափերից մինչև Խաղաղ օվկիանոս, կառուցում են սոցիալիզմ, կոմունիզմ, իրականացնում են պատմական մեծագույն պրոգրեսը։

ПРОБЛЕМА ОБЩЕСТВЕННОГО ПРОГРЕССА И БУРЖУАЗНАЯ ФИЛОСОФИЯ ИСТОРИИ

Г. Г. АСЛАНЯН

(Резюме)

Идея прогресса — одна из важных проблем, вокруг которой происходили ожесточенные споры между передовыми и реакционными течениями, мыслителями и деятелями. С возникновением марксизма борьба за и против прогресса приняла всесторонний и более глубокий характер. Только марксизм-ленинизм раскрыл объективные законы исторического процесса, научно обосновал закон общественного прогресса и необходимость коммунистического преобразования общества.

В буржуазной философии, историографии и социологии идея прогресса претерпела ясно выраженную эволюцию, отражая экономическую и политическую эволюцию буржуазии. До начала XIX века передовые мыслители и деятели XVI—XVIII веков, материалисты и просветители в борьбе против средневековых учреждений и идеологии страстно защищали идею общественного прогресса, ратовали за установление справедливого общественного строя. Их взоры были тогда обращены в будущее. Взгляды буржуазных просветителей и материалистов были, однако, ограниченными. Русские революционные демократы XIX века — идеологи крестьянской революции, во главе с Н. Г. Чернышевским, были более последовательными борцами за социальный прогресс.

В XIX веке буржуазные философы и социологи не отвергают идею прогресса, однако теперь они вкладывают в нее не революционное, а консервативное содержание: их взоры направлены не в будущее, а на увековечивание уже установившегося буржуазного строя. Это был медовый период капиталистического прогресса, и буржуазные идеологи, начиная от философов и кончая поэтами и моралистами, пели ему безудержные дифирамбы.

Резкий поворот в этом вопросе происходит в конце XIX века, с переходом капитализма в свою империалистическую стадию, когда обнаруживаются острые противоречия между общественными производительными силами и всем буржуазным экономическим строем, начинаются первые признаки разложения капитализма, сковывающего дальнейший ход общественного прогресса. В этих условиях прогресс теряет в глазах буржуазии свое обаяние; ее идеологи возрождают или строят антинаучные и реакционные философско-исторические концепции.

До второй мировой войны наиболее реакционными являлись концепции Фр. Ницше, Осв. Шпенглера и других. Ницше — крайне реакционный идеолог империализма, он отрицает смысл жизни и истории, отвергает закономерность истории и даже само человечество как таковое. Историческому прогрессу он противопоставляет ложную идею «вечного возврата». Ницше пророчествовал об уничтожении человеческой культуры. Одной из самых антипрогрессивных философско-исторических концепций периода первой мировой войны и Октябрьской социалистической революции явилась концепция идеолога прусских юнкеров — Освальда Шпенглера. В своей книге «Закат Европы» (1920 г.) он создал так называемую теорию локальных культур, согласно которой в истории нет поступательного, т. е. прогрессивного развития, а есть лишь отдельные, локальные культуры, каждая из которых, подобно организму, рождается, растет, гибнет, разлагается. Неизбежная гибель в ближайшем будущем ожидает и всю западную культуру. Злейший враг социализма и марксизма, Шпенглер проповедует необходимость мирового господства прусских милитаристов.

После второй мировой войны образуется мировой лагерь социализма, происходит распад колониальной системы империализма, ее зона сильно суживается, народы начинают играть все более решающую роль в определении своей судьбы и в разрешении международных проблем.

В этих условиях мировая система капитализма вступает в новую стадию своего кризиса. Идейный кризис, разброд переживают и буржуазная философия и социология. Противники социального прогресса, враги социализма, защитники капитализма начинают новый поход против идеи прогресса. Этот поход характеризуется в трех направлениях.

Крайние скептики и пессимисты с порога отвергают идею социального прогресса, пророчествуя о неизбежной гибели мировой цивилизации, якобы вследствие технического прогресса. Другие апологеты капитализма создали легенду о «народном капитализме», о новой «промышленной революции», о коренных изменениях в собственности монополий и перераспределении общественного богатства, о преодолении капитализмом своих противоречий и т. п. Наконец, критики идеи социального прогресса, фальсифицируя ее, противопоставляют ей концепцию циклического развития истории, возрождая тем самым теорию локальных цивилизаций. Все это опровергается данными, приведенными самими буржуазными социологами, историками, экономистами, и марксистским анализом фактов.

Единственно цельную научную теорию общественно-исторического прогресса создал марксизм-ленинизм, под знаменем которого более миллиарда человек строит социализм — коммунизм, осуществляют величайший исторический прогресс.